ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2020 թվականի N 20-Ա

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 30-ի թիվ 6 արտահերթ նիստի թիվ 2 որոշումը, հիմք ընդունելով 15.06.2018թվականին Գագիկ Ավագյանի կողմից տրված գույքի բաժանման հատակագիծը և Գրիշա Ժորայի Գալստյանի 04.05.2020թվականի դիմումը, *որոշում եմ՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքում գտնվող Գրիշա Ժորայի Գալստյանին պատկանող /04-077-0009-0017/տնամերձ հողամասը բաժանել երկու մասի: Կողմ 2-1225,0քմ. տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Շահումյան համայնք Լ.Նավասարդյան փող., թիվ 60, իսկ կողմ 1-1175,0քմ. տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Շահումյան համայնք Լ.Նավասարդյան փող., թիվ 60/1:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

2020թ. մայիսի 04
Շահումյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2020 թվականի N 21-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի՝ Գրիշա Ժորայի Գալստյանը /ծնված 26.10.1969թ./ դիմել է Արմավիրի մարզի Շահումյանի համայնքապետարան իրեն պատկանող Շահումյան համայնքի Լ.Նավասարդյան 60 հասցեում գտնվող ինքնակամ օժանդակ շինությունը օրինականացնելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի ապրիլի 17-ի N 470-Ն և 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

1. Քաղաքացի՝ Գրիշա Ժորայի Գալստյանին /ծնված 26.10.1969թ./ պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի Լ.Նավասարդյան 60 հասցեում (կողմ 2-1125քմ.) գտնվող տնամերձ հողամասի վրա կառուցված /անասնաշենք/ ընդհանուր 126.0 քմ մակերեսով ինքնակամ կառույցը և ինքնակամ բացված 1 դուռ՝ 1.0քմ մակերեսով, ճանաչել օրինական:

2.Քաղաքացի Գրիշա Ժորայի Գալստյանի կողմից ինքնակամ կառույցի օրինականացման համար համայնքի բյուջե պետք է մուծվի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 860 /ութ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ անասնաշենք՝ /860x126.0=108360/ և մեկ դուռ՝ /860x1.0=860/ընդամենը 109220/մեկ հարյուր ինը հազար երկու հարյուր քսան / ՀՀ դրամ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սահմանել, որ որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

2020թ. մայիսի 04
Շահումյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2020թվականի N 22-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N95-Ն որոշման 6-րդ կետը, որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի 2020 թվականի բյուջեի ծախսերի նախահաշիվների մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 08 բաժին 2 խումբ 3 դասի /Մշակույթի տներ և ակումբներ/ ծրագրի 4511/սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին/ հոդվածի սեպտեմբեր ամսվա ժամանակացույցով նախատեսված գումարը տեղափոխել մայիս ամիս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

2020թ. մայիսի 04
Շահումյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2020 թվականի N 23-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 04-Ի N 20-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով 12.05.2020 թվականին Ավագ Ավագյանի կողմից տրված գույքի բաժանման նոր հատակագիծը, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 04-ի <<Տնամերձ հողամասին և նրա վրա առկա բնակելի տանը հասցե համարանիշ տրամադրելու և գույքը բաժանելու մասին>> N20-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1/որոշման հիմքում գրված <<Գագիկ>> բառը փոխարինել <<Ավագ>> բառով,

2/որոշման 1-ին կետում կողմ 2-ից հետո <<1225,0քմ.>> թվերը փոխարինել <<1212,0քմ.>> թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

2020թ. մայիսի 12
Շահումյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2020 թվականի N 24-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 04-Ի N 21-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով 12.05.2020 թվականին Ավագ Ավագյանի կողմից տրված գույքի բաժանման նոր հատակագիծը, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 04-ի <<Ինքնակամ օժանդակ շինությունները օրինականացնելու մասին>> N21-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1/Որոշման 1-ին կետում կողմ 2-ից հետո <<1125,0քմ.>> թվերը փոխարինել <<1212,0քմ.>> թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳՆԱՊԱՍԱՐՅԱՆ

2020 թ. մայիսի 12
Շահումյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մայիսի 2020 թվականի N 25-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 04-Ի N 20-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի դրույթներով , հիմք ընդունելով 20.05.2020 թվականին Ավագ Ավագյանի կողմից տրված գույքի բաժանման նոր հատակագիծը և Գրիշա Գալստյանի դիմումը, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 04-ի <<Տնամերձ հողամասին և նրա վրա առկա բնակելի տանը հասցե համարանիշ տրամադրելու և գույքը բաժանելու մասին>> N20-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1/Որոշման 1-ին կետում կողմ 1-ից հետո <<1175,0քմ.>> թվերը փոխարինել <<1167,0քմ.>> թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

2020թ. մայիսի 21
Շահումյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2020 թվականի N 26-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. <<ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, *որոշում եմ*՝

1.Արմավիրի մարզի Շահումյան համայնքում գտնվող 04-077-0032-0015, 04-077-0032-0016 և 04-077-0032-0017 ծածկագրերով հողամասերը միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Արմավիրի մարզ, Շահումյան համայնք, Գ.Նավասարդյան 2-րդ փողոց թիվ 2 հողամաս:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

2020 թ. մայիսի 27
Շահումյան համայնք